600.0140.28.04.21

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2021 թվականի №140Ա

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի №683Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2007 թվականի դեկտեմբերի 28-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը համարների զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» №683Ա որոշման 1-ին կետով հաստատված №1 հավելվածի №4 աղյուսակի 4-րդ կետի համաձայն՝ «103» կարճ կոդը նախատեսված է շտապ բժշկական օգնության ծառայության թեժ գծի օգտագործման համար,

բ) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 2021 թվականի փետրվարի 16-ի №ԱԱ/11.2/2611-2021 գրությունը, որով հայցել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) աջակցությունը՝ շտապ բժշկական օգնության ծառայության զանգերի ընդունման «103» կարճ կոդի տնօրինման իրավունքը և դրանից բխող պարտավորությունները, տվյալ ոլորտում նախատեսվող հետագա բարեփոխումների կազմակերպման խթանման նպատակով Նախարարությանը փոխանցելու հարցում,

գ) ի պատասխան Հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 22-ի №ԳԲ/34.2-Մ2-10/534-2021 գրության՝ Նախարարության 2021 թվականի փետրվարի 23-ի ՈԱԱ/11.2/3268-2021 և «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի մարտի 2-ի N282/21-U11 գրությունները, որոնցով վերջիններս հայտնել են, որ

«Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի №683Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ չկան, ինչպես նաև «Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի փետրվարի 26-ի N131 (Հանձնաժողովում մուտք է եղել 2021 թվականի մարտի 9-ին) գրությունը, որով վերջինս հայտնել է, որ Ընկերության հիմնադիրը և բաժնետոմսերի (100 տոկոս) սեփականատերը Երևանի քաղաքապետարանն է և գրությունը պետք է վերահասցեագրել Երևանի քաղաքապետի անունով,

դ) ի պատասխան Հանձնաժողովի 2021 թվականի մարտի 10-ի №ԳԲ/34.2-Մ2-10/676-2021 գրության՝ Երևանի քաղաքապետարանի 2021 թվականի մարտի 22-ի №01/10-29209 գրությունը, որով Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ «103» կարճ կոդի տնօրինման իրավունքը և դրանից բխող պարտավորությունները Նախարարությանը փոխանցելու հարցը բավարար չափով հիմնավորված չէ, դրա իրականացմամբ կարող է խախտվել Ընկերության բնականոն գործունեությունը և, հաշվի առնելով Ընկերության գործունեության յուրահատկությունները՝ կարող է առաջացնել ծանր հետևանքներ: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Երևանի քաղաքապետը կառավարում է Երևանի սեփականություն համարվող առողջապահական կազմակերպությունները: Տվյալ դեպքում՝ Ընկերության գործունեությունը համակարգվում է Երևանի քաղաքապետի կողմից, և վերջինս պատասխանատվություն է կրում նշված ոլորտում այդ լիազորությունների իրականացման համար: Երևան քաղաքի բնակչությունը տարիների ընթացքում տեղեկացված է, որ բուժօգնության դիմելու համար անհրաժեշտ է զանգահարել «103» կարճ կոդին, որը ուղիղ Ընկերության տնօրինման տակ չգտնվելու դեպքում զանգը/կանչը պետք է ուղղվի Նախարարություն և այնտեղից վերահասցեագրվի Ընկերությանը: Արդյունքում՝ օգնության կարիք ունեցող քաղաքացու և օգնությունը տրամադրող շտապ օգնության ծառայության միջև ի հայտ է գալու լրացուցիչ օղակ, որի միակ գործառույթը լինելու է զանգի/կանչի վերահասցեագրումը: Այս գործառույթը պահանջելու է լրացուցիչ ժամանակ, իսկ քաղաքացուն օգնության տրամադրման ուշացումը կարող է հանգեցնել ընդհուպ մահվան կամ այլ ծանր հետևանքների: Այս կապակցությամբ Երևանի քաղաքապետարանն առաջարկել է Նախարարության կողմից

նշված տեխնիկական և աշխատանքային խնդիրները հստակ մատնանշելու դեպքում քննարկել լուծման այլ (առավել արդյունավետ) տարբերակներ,

ե) ի պատասխան Երևանի քաղաքապետարանի դիրքորոշման՝ Նախարարության 2021 թվականի մարտի 31-ի №ԱԱ/11.2/6206-2021 գրությունը, որով վերջինս վերահաստատում է իր դիրքորոշումը շտապ բժշկական օգնության ծառայության զանգերի ընդունման «103» կարճ կոդի տնօրինման իրավունքը և դրանից բխող պարտավորություններն իրեն փոխանցելու անհրաժեշտության վերաբերյալ, հայտնելով նաև, որ զանգերի ստացումը և վերահասցեագրումը ոչ միայն Ընկերությանը, այլև Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում իրականացվելու է կենտրոնացված և օպերատիվ կարգով, ուստի հիմնավոր չէ Երևանի քաղաքապետարանի՝ քաղաքացիներին անհետաձգելի օգնության արդյունավետության նվազեցման վերաբերյալ դիրքորոշումը,

զ) ի պատասխան Երևանի քաղաքապետարանի 2021 թվականի ապրիլի 21-ի №07/48691 գրության Հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 21-ի №ԳԲ/34.2-Մ2-10/1286-2021 գրությունը, որի համաձայն Երևանի քաղաքապետարանը ծանուցվել է, որ Հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 21-ի նիստի օրակարգում ներառված՝ սույն որոշման նախագծի քննարկումը հետաձգվել է և ներառվել է Հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 28-ի նիստի օրակարգում, ինչպես նաև տրամադրվել է քննարկվող հարցին առնչվող նյութերը, այդ թվում՝ Նախարարության 2021 թվականի մարտի 31-ի №ԱԱ/11.2/6206-2021 գրության պատճենը,

է) Երևանի քաղաքապետարանի 2021 թվականի ապրիլի 27-ի №07/50060h գրությունը, որի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանը.

- նշելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին և 21-րդ հոդվածի 2-րդ մասերը, խնդրել է Ընկերությանը սույն վարույթին ներգրավել որպես երրորդ անձ, քանի որ վարչական վարույթը վերաբերում է նաև Ընկերությանը, որը հանդիսանում «103» կարճ կոդի իրավատեր, նշված շահագործման իրավունքի հնարավոր դադարեցումը ուղղակի առնչվելու է Ընկերության իրավունքներին, վերջինիս իրավունքներն ու օրինական շահերը շոշափվելու են սույն վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով, Ընկերությունը առանձին իրավաբանական անձ է, Երևանի քաղաքապետարանի ստորաբաժանում չէ,

գործում է ինքնուրույն և հանդիսանում է վարչական վարույթի ինքնուրույն սուբյեկտ՝ անկախ այն հանգամանքից, որ նշված ընկերության հիմնադիրը Երևանի համայնքն է,

- նշելով Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովի պաշտոնատար անձին կամ անձանց բացարկ հայտնելու նպատակով խնդրել է տրամադրել տեղեկատվություն սույն որոշման նախագիծը կազմած ու հրապարակած անձանց վերաբերյալ, քանի որ Նախարարության 2021 թվականի փետրվարի 16-ի №ԱԱ/11.2/2611-2021 գրության բավարարման վերաբերյալ որոշման նախագծի կազմումը, այն պաշտոնապես վարչական վարույթի նյութերում ներառումը և Հանձնաժողովի կայքում տեղադրումը հանդիսանում է հրապարակայնորեն գործի հնարավոր ելքի մասին արտահայտում և գործում առկա փաստական հանգամանքներից որոշներին առավելություն տալու գնահատական,
- խնդրել է սույն թվականի ապրիլի 28-ին նշանակված նիստում «103» կարճ կոդի տնօրինման հարցը չքննարկել և դրա քննարկումը հետաձգել՝ հնարավորություն տալով Երևան համայնքին, անհրաժեշտության դեպքում ներկայացնելու բացարկի միջնորդություն և ծանոթանալու Ընկերության ներկայացրած դիրքորոշմանն ու ապացույցներին, ինչն անհրաժեշտ է քննարկվող հարցի վերաբերյալ վերջնական դիրքորոշման ձևավորման համար,

ը) «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 2-րդ կետը, որի համաձայն՝ առողջապահության, բժշկական օգնության որակի և արդյունավետության բարձրացման, առողջապահական համակարգի արդյունավետ գործունեության նպատակով առողջապահական կազմակերպություններին կազմակերպամեթոդական օգնության ապահովման, առողջապահության համակարգի արդյունավետ գործունեության, կազմակերպման, կառավարման և տնտեսավարման ժամանակակից մեխանիզմների ներդրման, մարդու և հանրության առողջության պահպանման, բնակչության առողջության բարելավման, արտակարգ իրավիճակներում բնակչության բժշկական օգնության ապահովման..., ոլորտներում Կառավարության քաղաքականությունը մշակում և իրականացնում է Նախարարությունը,

թ) Հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 13-ի «Հատուկ ծառայությունների կամ ծառայության կոդերի զբաղեցման կանոնները սահմանելու մասին» №210Ն որոշման 1-ին

կետով սահմանված կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 2-րդ և 7-րդ կետերը, որոնց համաձայն՝ «1xx» հատուկ ծառայությունների կոդը կարող է օգտագործվել բացառապես արտակարգ իրավիճակներում կամ մարդու կյանքի, առողջության, գույքի կամ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների պաշտպանություն ապահովող իրավասու մարմինների կողմից՝ նշված իրավիճակներում օպերատիվ արձագանքման գործառույթներ իրականացնելու համար, ինչպես նաև պետական կամ հանրային նշանակության կառույցների կողմից՝ հանրությանը մատուցվող տեղեկատվական բնույթի ծառայությունների տրամադրման համար և մինչև կանոններն ուժի մեջ մտնելու պահը գործարկված կոդերը շարունակում են գործարկվել նույն պայմաններով՝ մինչև Հանձնաժողովի կողմից այլ պայմաններ սահմանելը,

ժ) Կանոնների իմաստով «103» կարճ կոդը ենթակա է օգտագործման Նախարարության կողմից, քանի որ՝

- շտապ բժշկական օգնության ծառայության թեժ գծի «103» կարճ կոդն ունի համապետական նշանակություն և նշված կարճ կոդին կատարվող զանգերի սպասարկման շրջանակում շտապ բժշկական օգնության ծառայությունների մատուցումն իրականացվում է ամբողջ հանրապետության տարածքով, իսկ առողջապահական ծառայությունների տեսանկյունից այն դիտարկվում է շտապ բժշկական օգնության արտահիվանդանոցային ծառայության հետ կապի միջոց,
- շտապ օգնության ծառայության գործակարգավարական բաժինը համարվում է բժշկական ստորաբաժանում, որն էլ իր հերթին «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի իմաստով առողջապահության ոլորտում մասնագիտական գործունեություն է,
- առողջապահության ոլորտի իրավասու մարմին է հանդիսանում Նախարարությունը,

ի) որ Հանձնաժողովը, ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի ներկայացրած դիտարկումները, գտնում է, որ դրանք հարցը չքննարկելու կամ հարցի քննարկումը հետաձգելու հիմք չեն կարող լինել հետևյալ հիմնավորումներով.

- Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը համարների զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» №683Ա որոշման համաձայն՝ «103» կարճ կոդը

նախատեսված է շտապ բժշկական օգնության ծառայության թեժ գծի օգտագործման համար, այլ ոչ թե հատուկ Ընկերության կողմից օգտագործելու նպատակով, նկատի ունենալով նշված կոդի օգտագործման և շտապ բժշկական օգնության ծառայության մատուցման համապետական նշանակությունը: Այդուհանդերձ, հարցի քննարկմանն Ընկերությունն ի սկզբանե ներգրավված է եղել, սակայն Հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 22-ի ՈԳԲ/34.2-Մ2-10/534-2021 գրությանն ի պատասխան Ընկերությունն իր 2021 թվականի փետրվարի 26-ի N131 գրությամբ հայտնել է, որ Ընկերության հիմնադիրը և բաժնետոմսերի (100 տոկոս) սեփականատերը Երևանի քաղաքապետարանն է և գրությունը պետք է վերահասցեագրել Երևանի քաղաքապետի անունով: Ընդ որում, Ընկերության նշված գրության պատճենը տրամադրվել է Երևանի քաղաքապետարանին (Հանձնաժողովի 2021 թվականի մարտի 10-ի ՈԳԲ/34.2-Մ2-10/676-2021 և ապրիլի 21-ի ՈԳԲ/34.2-Մ2-10/1286-2021 գրություններով),

- «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա Հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 1-ի №462Ն որոշմամբ հաստատված՝ Հանձնաժողովի նիստեր հրավիրելու և անցկացնելու կարգի 13-րդ, 24-րդ և 25-րդ կետերի բովանդակությունից ակնհայտ է, որ հարցերը Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվում են արդեն իսկ մշակված նախագծերի միջոցով, որոնք կազմվում են համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կողմից և հրապարակվում (կայքում զետեղվում) են Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի վարման համար պատասխանատու աշխատակցի կողմից: Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարույթի մասնակիցները օրենքով նախատեսված դեպքերում կոլեգիալ կազմով վարչական վարույթ իրականացնելիս գրավոր բացարկ կարող են հայտնել կոլեգիալ կազմի անդամի: Մինչդեռ, տվյալ պարագայում սույն որոշման նախագիծը կազմող և հրապարակող անձինք վարչական վարույթի կոլեգիալ կազմի անդամ չեն հանդիսանում,

և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը համարների զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» №683Ա որոշման 1-ին կետով հաստատված №1 հավելվածի №4 աղյուսակի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | | |
|---|---|---|
| 4. | շտապ բժշկական օգնության ծառայության զանգերի ընդունման թեժ գիծ (օգտագործող՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն) | 103 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Գ. ԲԱԴՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
28 ապրիլի 2021թ.